Կարգապահական գործ թիվ ԿԳ-23006

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՓԱՍՏԱԲԱՆ ՏԱԹԵՎԻԿ ԱՐՏԱՎԱԶԴԻ ՄԻՐՈՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովը **(այսուհետ նաև՝ Հանձնաժողով)**, Հանձնաժողովի նախագահ՝ Տաթևիկ Շալջյանի, Հանձնաժողովի զեկուցող անդամ՝ Միքայել Դանիելյանի, Հանձնաժողովի անդամներ՝ Վերոնիկա Ալեքսանյանի, Վահե Աստվածատրյանի, Կարինե Բաղդասարյանի, Միքայել Դանիելյանի, Հայկ Սահակյանի, Արաքս Վարդանյանի և Վահագն Քեշիշյանի կազմով,

քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի,

մասնակցությամբ՝ դիմող Հայկ Մելքոնյանի, Հայկ Մելքոնյանի ներկայացուցիչ՝ Սարգիս Մելքոնյանի և փաստաբան Տաթևիկ Միրոյանի,

քննության առնելով փաստաբան Տաթևիկ Արտավազդի Միրոյանին **(այսուհետ նաև՝ Փաստաբան կամ Պատասխանող)** (արտոնագիր՝ թիվ 2340), կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը՝

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. **<u>Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.</u>**

Հայկ Մելքոնյանը **(այսուհետ՝ նաև Դիմող)**, դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ **(այսուհետ՝ նաև Պալատ)**, հայտնել է, որ 2022 թվականին դիմել է Փաստաբանին՝ քաղաքացիական գործով մինչև Վճռաբեկ դատարանի վերջնական դատական ակտ կայացնելը փաստաբանական ծառայություններ ստանալու նպատակով: Պայմանագրի համաձայն՝ նրան վճարել է 400.000 ՀՀ դրամ, սակայն առաջին ատյանի դատարանի երկու դատական նիստերին մասնակցելուց հետո՝ առանց որևէ պատճառաբանության, Փաստաբանը վերադարձրել է գումարի կեսը,

այնուհետև հրաժարվել է դատարան ներկայանալուց, դրանից հետո ամիսներ շարունակ հրաժարվել է իր զանգերին պատասխանելուց:

Դիմողը խնդրել է «պահանջել փաստաբանից» վերադարձնել նրան տրամադրված գործի նյութերը և վճարված գումարի մյուս կեսը:

Դիմողը 02.02.2023 թվականին Պալատին հասցեագրված դիմումին կից ներկայացրել է փաստաբանի կողմից դատարան ներկայացված հայցադիմումի, իրեն տրամադրված լիազորագրի պատճենները և իր վերաբերյալ դատական գործի՝ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից հանված տեղեկատվություն:

Միաժամանակ, կարգապահական վարույթի շրջանակներում 06.04.2023թ. ներկայացված բացատրությամբ Դիմողն ըստ էության պնդել է նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ միաժամանակ հավելելով, որ Փաստաբանը պայմանագրի օրինակն իրեն չի տրամադրել, երկու դատական նիստից հետո առանց որևէ բացատրության հրաժարվել է հետագա նիստերին մասնակցելուց, դադարել է պատասխանել իր հեռախոսազանգերին:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Դիմողն ըստ էության պնդել է իր նախկինում ներկայացրած դիրքորոշումը՝ հավելելով, որ պայմանագրով սահմանված գումարի մի մասը՝ 200.000 ՀՀ դրամը վճարել է կանխիկ՝ մինչև պայմանագիրը ստորագրելը, իսկ մյուս 200.000 ՀՀ դրամը՝ բանկային փոխանցումով:

Միաժամանակ, Դիմողը Հանձնաժողովին ներկայացրել է Փաստաբանի ուղարկած հաղորդագրությունը. «Սարգիս ջան ես խոսք եմ տվել իմ վերցրած գումարի մասով, որը ոնց տեսաք փոխանցեցի: Ասել էի, որ Մարիի հետ կխոսեմ իր վերցրած 200.000 վերադարձի մասով, ու խոսացել եմ մանրամասն, ինքն ել պնդում է, որ իր մասով գործը ամբողջովին արված է»:

Բացի այդ, Դիմողը նշել է, որ բնօրինակ փաստաթղթերը պահպանվում են իր մոտ, և ինքը պահանջել է Փաստաբանից այն փաստաթղթերը, որոնց պատճենները տրամադրել է նրան:

2. <u>Պատասխանողի համառոտ բացատրությունները.</u>

Մինչև կարգապահական վարույթ հարուցելու հարցի լուծումը փաստաբան Տաթևիկ Միրոյանին առաջարկվել է «Փաստաբանության մասին» օրենքի (**այսուհետ նաև՝ Օրենք**) 39.3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, ներկայացնել բացատրություն Հայկ Մելքոնյանի դիմումի վերաբերյալ, սակայն Փաստաբանի կողմից բացատրություն չի ներկայացվել:

Միաժամանակ, կարգապահական վարույթի շրջանակներում 11.04.2023թ. Փաստաբանը ներկայացրել է ապացույցներ, որոնք վերաբերում են իր և Դիմողի որդու՝ Սարգիս Մելքոնյանի միջև առկա նամակագրությանը, էլեկտրոնային փոստի միջոցով փաստաթղթերը տրամադրելուն, պայմանագիրը կողմերի համաձայնությամբ լուծելուն, ինչպես նաև դրա լուծումից հետո իրեն վճարված գումարը Դիմողին վերադարձնելու հանգամանքներին:

Փաստաբանը նաև հավելել է, որ Դիմողի կողմից իրեն բնօրինակ փաստաթղթեր չեն հանձնվել, իսկ պայմանագիրը լուծվել է նաև այն պատճառով, որ Դիմողը չի վճարել պայմանագրի ամբողջ գինը (400.000 ՀՀ դրամ) այլ միայն մի մասը՝ 200.000 ՀՀ դրամ, որն էլ վերադարձվել է վերջինիս:

Հանձնաժողովի նիստի ընթացքում Փաստաբանն ըստ էության պնդել է իր նախկինում ներկայացված դիրքորոշումը՝ հավելելով, որ Դիմողը իրեն վճարել է միայն 200.000 ՀՀ դրամ:

Միաժամանակ, Փաստաբանը հավելել է, որ Դիմողի կողմից իրեն բնօրինակ փաստաթղթեր տրված չեն եղել, որպիսի պայմաններում նման փաստաթղթերը վերադարձնելու պարտավորություն չէր կարող ունենալ:

3. <u>Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.</u>

Պալատի նախագահի 10.02.2023թ. թիվ 38-Ա/ԿԳ-23006 որոշմամբ փաստաբան Տաթևիկ Միրոյանի նկատմամբ Օրենքի **19-րդ հոդվածի 2-րդ կետի**, ինչպես նաև Պալատի ընդհանուր ժողովի 2019 թվականի հոկտեմբերի 19-ի թիվ 1-Լ որոշմամբ հաստատված փաստաբանի վարքագծի կանոնագրքի **(այսուհետ նաև՝ Կանոնագիրք) 3.8.2, 3.8.3 և 3.8.4 ենթակետերի** խախտման հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ:

16.02.2023թ. կարգապահական գործի նախապատրաստումը հանձնարարվել է Պալատի աշխատակազմի սպասարկող անձնակազմի աշխատակից՝ Գարիկ Հախնազարյանին (**այսուհետ՝ նաև Աշխատակից**):

3.1. <u>Վկաների ցուցմունքները.</u>

Սույն կարգապահական գործով վկաներ չեն հրավիրվել:

4. <u>Կարգապահական գործ նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը և գործի հանձնումը Հանձնաժողովին.</u>

Գործի նախապատրաստման արդյունքում Աշխատակիցը 17.04.2023թ. կազմել է եզրակացություն:

Եզրակացությամբ հաստատված չի համարվել Փաստաբանի կողմից առանց որևէ պատճառաբանության պայմանագիրը լուծելու փաստը, Դիմողի կողմից հանձնարարության կատարման ընթացքում Փաստաբանին փաստաթղթերի բնօրինակներ հանձնելու կամ Փաստաբանի կողմից փաստաթղթեր ձեռք բերելու փաստը:

Կարգապահական գործը Պալատի Հանձնաժողովին է հանձնվել 17.04.2023թ.:

Հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել 18.05.2023թ. ժամը 19:30-ին, 31.05.2023թ. ժամը 20:30-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքյան 7-2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

5. <u>Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.</u>

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

– Փաստաբան Տաթևիկ Միրոյանը ստանձնել է Հայկ Մելքոնյանի շահերի պաշտպանությունը: *Սույն փաստը հաստատվում է լիազորագրի և հայցադիմումի պատճեններով, ինչպես նաև «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգից արտատպված քաղվածքով:*

– Պայմանագրի գինը կազմել է 400.000 ՀՀ դրամ: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով:*

– Փաստաբան Տաթևիկ Միրոյանի և Դիմողի միջև կնքված պայմանագիրը լուծվել է: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով:*

– Փաստաբան Տաթևիկ Միրոյանը վերադարձրել է 200.000 ՀՀ դրամ: *Սույն փաստը հաստատվում է կողմերի բացատրություններով և բանկային հաշվի քաղվածքներով:*

– Հանձնարարության կատարման ընթացքում և դրանից հետո փաստաբան Տաթևիկ Միրոյանի մոտ պահպանվել են Դիմողի որդու կողմից տրամադրված փաստաթղթերի պատճենները: *Սույն փաստը ընդունել են կողմերը, այն նաև հաստատվում է Փաստաբանի էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկված լուսապատճենով:*

Հանձնաժողովը, ուսումնասիրելով գործում առկա ապացույցները, հաշվի առնելով նաև կարգապահական գործը նախապատրաստող Աշխատակցի եզրակացությունը, հաստատված չի համարում հետևյալ փաստերը.

– Փաստաբանի կողմից առանց որևէ պատճառաբանության պայմանագիրը լուծելու փաստը: *Սույն փաստը հաստատված չի համարվում Դիմողի որդու՝ Սարգիս Մելքոնյանի և Փաստաբանի նամակագրության բովանդակությունից ելնելով: Ավելին, նամակագրության բովանդակությունից կարելի է գալ այն եզրահանգման, որ կողմերը պայմանագիրը լուծել են փոխադարձ համաձայնությամբ: Բացի այդ Փաստաբանը նշել է, որ պայմանագրի լուծման պատճառներից է հանդիսացել Պատվիրատուի կողմից թերի փոխանցումը:*

– Դիմողի կողմից հանձնարարության կատարման ընթացքում Փաստաբանին են հանձնվել փաստաթղթերի բնօրինակներ կամ Փաստաբանն է ձեռք բերել փաստաթղթեր: *Սույն փաստը հաստատված չի համարվում, քանի որ հայցադիմումին կից ներկայացված փաստաթղթերը դատարան է ներկայացվել պատճենի տեսքով, ինչպես նաև Փաստաբանի կողմից ներկայացված լուսապատճենով: Միևնույն ժամանակ, հաշվի է առնվում այն հանգամանքը, որ վերը նշված ապացուցման ենթակա փաստը ենթակա էր ապացուցման Դիմողի կողմից և մնացել է չապացուցված, իսկ Փաստաբանն էլ հերքել է որևէ*

փաստաթուղթ բնօրինակով ստանալու հանգամանքը՝ նշելով, որ փաստաթղթերը ուղարկվել են էլեկտրոնային եղանակով: Դիմողը ևս նիստի ժամանակ կատարած հայտարարությամբ ընդունել է, որ Փաստաբանին բնօրինակներ չեն փոխանցվել:

6. <u>Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.</u>

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Տաթևիկ Միրոյանը փաստաբան է հանդիսանում 25.11.2017թ. թվականից, և 2018-2023թթ. ընկած ժամանակահատվածում չունի կարգապահական տույժ:

7. <u>Պալատի Հանձնաժողովի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.</u>

Հանձնաժողովը գտնում է, որ փաստաբան Տաթևիկ Միրոյանի նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.2, 3.8.3 և 3.8.4 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված կարգապահական վարույթը ենթակա է կարճման՝ հետևյալ պատճառաբանությամբ.

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել նույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար, ...* :

Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթն իրականացվում է օրինականության, օրենքի և փաստաբանների պալատի առջև հավասարության, մրցակցության, կատարված կարգապահական խախտման համար նշանակվող կարգապահական տույժի համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ *փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերն են՝ սույն օրենքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ, ինչպես նաև փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ *Փաստաբանը ենթակա չէ կարգապահական պատասխանատվության մեղքի բացակայության դեպքում:*

Օրենքի 39.1-ին հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ *կարգապահական խախտման համար փաստաբանը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ սույն օրենքով սահմանված կարգով՝ Կարգապահական հանձնաժողովի՝ կարգապահական*

պատասխանատվության ենթարկելու մասին ուժի մեջ մտած որոշմամբ: Փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են փաստաբանի օգտին:

Ներկայացված նորմերի համադրության և վերլուծության արդյունքում կարելի է փաստել, որ Օրենքով սահմանված են որոշակի վավերապայմաններ, որոնց առկայության դեպքում միայն կարգապահական վարույթի շրջանակներում կարող է քննարկվել փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը: Նշված վավերապայմաններն իրենց հերթին ենթադրում են փաստաբանի վարքագծում Օրենքի և Կանոնագրքի պահանջների խախտման առկայությունը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում, նման վավերապայմանների ամրագրումն ինքնանպատակ չէ և ըստ էության նպատակաուղղված է կարգապահական վարույթի իրականացմանը՝ օրինականության, հավասարության, մրցակցության, համաչափության և անմեղության կանխավարկածի սկզբունքների հիման վրա:

Այս համատեքստում, կարգապահական վարույթի շրջանակներում առանձնակի նշանակություն է ձեռք բերում փաստաբանի վարքագծում համապատասխան խախտումների հատկանիշների առկայության ապացուցման հանգամանքը, ինչի անտեսումը կամ չապահովումը թույլ է տալիս եզրակացնել փաստաբանի վարքագծում առերևույթ խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ դրանք չեն հաստատվել վարույթի ընթացքում: Ըստ այդմ՝ յուրաքանչյուր կողմ պարտավոր է ապացուցել իր կողմից վկայակոչված հանգամանքները, կրում է դրանք ապացուցված չլինելու բացասական հանգամանքները, իսկ փաստաբանի կատարած կարգապահական խախտման վերաբերյալ չփարատված կասկածները մեկնաբանվում են վերջինիս օգտին:

Վերոնշյալի հաշվառմամբ, Հանձնաժողովը գտնում է, որ կարգապահական պատասխանատվության հիմք չի կարող լինել միայն ենթադրյալ իրավախախտման մասին դիմողի պնդումը, որը հիմնավորված չէ այնպիսի հանգամանքների վկայակոչմամբ և (կամ) ապացույցներով, որոնք հաստատապես կվկայեն փաստաբանի կողմից Օրենքի կամ Կանոնագրքի պահանջների խախտման կատարման մասին:

7.1. Կանոնագրքի 3.8.2-րդ և 3.8.3-րդ ենթակետերի խախտման մասով Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արձանագրել.

Կանոնագրքի 3.8.2-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանը, եթե օրենքը չի արգելում և այլ բան նախատեսված չէ պայմանագրով, իրավունք ունի հրաժարվել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հետևյալ հիմքերով՝*

1) վստահորդը փաստաբանի պարզաբանումներին հակառակ կատարում է գործողություններ կապված հանձնարարության հետ, որոնք օրենքով արգելված են, կամ

վստահորդի հանձնարարությունները կարող են հանգեցնել փաստաբանի կողմից ՀՀ օրենսդրության կամ Կանոնագրքի խախտմանը.

2) վստահորդը պնդում է ակնկալվող արդյունքի ձեռքբերումը, որը օբյեկտիվորեն դարձել է անհնար՝ նոր ի հայտ եկած հանգամանքների կամ փաստերի բերումով,

3) վստահորդը թույլ է տալիս իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով իր ստանձնած պարտավորությունների կոպիտ խախտումներ,

4) հանձնարարության պատշաճ կատարումը անհնար է դառնում վստահորդի կողմից փաստաբանի խորհուրդներին հակառակ գործողություններ կատարելու հետևանքով,

5) վստահորդը կատարում է փաստաբանի պատիվը, արժանապատվությունը և հեղինակությունը անվանարկող գործողություններ,

6) վստահորդը հրաժարվում է կատարել իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով նախատեսված վճարումները:

Կանոնագրքի 3.8.3-րդ ենթակետի համաձայն՝ *փաստաբանի կողմից իրավական օգնություն ցույց տալու պայմանագրի կատարումից հրաժարվելու դեպքում փաստաբանը պարտավոր է բացատրել վստահորդին իրավական օգնություն ցույց տալու պայմանագրից հրաժարվելու պատճառները և զերծ մնալ այնպիսի գործողություններից, որոնք կարող են վնասել վստահորդի շահերին: Փաստաբանն իրավունք չունի թողնել գործը այնպիսի ձևով և այնպիսի հանգամանքներում, որի արդյունքում վստահորդը կարող է հայտնվել անելանելի դրության մեջ և ժամանակին չստանալ այլ իրավական օգնություն(…):*

Նշված կանոններով փաստաբանի համար սահմանվում են պարտականություններ, այն է՝ ելնել վստահորդի նպաստավոր շահերից և բարեխղճորեն և ժամանակին պաշտպանել վստահորդի իրավունքներն ու օրինական շահերը, ինչը ենթադրում է, որ փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերություններում պետք է ապահովվի անհրաժեշտ որոշակիություն և կանխատեսելիություն՝ իրավական երաշխիքներ ստեղծելով կողմերի համար: Ավելին, կնքված պայմանագրի որոշակի առարկայի շրջանակներում փաստաբանը պետք է կիրառի օրենքով չարգելված բոլոր հնարավոր միջոցները վստահորդի շահերը լավագույնս պաշտպանելու համար:

Վերոգրյալով ուղղակիորեն պայմանավորված է այն հանգամանքը, որ փաստաբանն իրավասու չէ ցանկացած իրավիճակում և առանց որևէ պատճառաբանության հրաժարվելու իր կողմից վստահորդի առջև ստանձնած պարտավորությունների կատարումից, որպիսի իրավիճակում կարող են վտանգվել վստահորդի շահերը, իսկ վստահորդը ժամանակին այլ իրավական օգնություն չստանալու պարագայում կարող է հայտնվել խոցելի և անելանելի դրության մեջ:

Սույն գործի շրջանակներում կողմերը ընդունել են, որ Փաստաբանը՝ Դիմողի իրավունքների և շահերի պաշտպանությունը ստանձնելուց հետո, 15.06.2021թ.

ներկայացրել է հայցադիմում՝ սեփականության իրավունքը ճանաչելու պահանջի մասին և մասնակցել է երկու դատական նիստերի:

Դիմողը պնդել է, երկու դատական նիստերին մասնակցելուց հետո Փաստաբանը չի պատասխանել իր կամ իր որդու հեռախոսազանգերին և երկու կամ երեք կայացած նիստերի բացակայությունից հետո միայն ասել է, որ վերցրած գումարը կվերադարձնի: Այս մասով պետք է արձանագրել, որ ըստ «Դատալեքս» դատական տեղեկատվական համակարգի՝ նշանակվել են հետևյալ դատական նիստերը՝ 06.10.2021թ. 24.02.2022թ. 31.05.2022թ. (Դատավորի հարգելի բացակայությամբ պայմանավորված 31.05.2022 թվականի ժամը 10:30-ի դատական նիստը տեղափոխվել է), 01.07.2022թ. 13.10.2022թ. (Դատավոր Հ. Զարգարյանը 23.09.2022 թվականից մինչև 20.10.2022 թվականը ներառյալ գտնվել է ամենամյա հերթական արձակուրդում), 06.12.2022թ.:

01.12.2022թ. Փաստաբանին ուղարկված հաղորդագրության համաձայն՝ «Տաթև ջան բարի լույս, **հուսով եմ հիշում եք,** որ այսօր ինձ գումար պետք է փոխանցեք, խնդրում եմ չուշացնել քանի որ ձեր գործով **ուրիշ փաստաբան եմ վարձել** ում պետք է գումար փոխանցեմ»: 01.12.2022թ. Փաստաբանը վերադարձրել է 200.000 ՀՀ դրամը:

Վերոգրյալից հետևում է նաև, որ Դիմողի և Փաստաբանի միջև կնքված պայմանագիրն ըստ էության լուծվել է կողմերի փոխադարձ համաձայնությամբ, ինչի մասին վկայում են Դիմողի որդու և Փաստաբանի միջև առկա հաղորդագրությունները, որպիսի պայմաններում Դիմողն ակնկալել է, որ Փաստաբանը վերադարձնելու է պայմանագրի գինը՝ իրեն վճարված գումարի չափով: Նիստերի ընթացքում կողմերի տված բացատրություններից ևս հնարավոր չէ պնդել, որ Փաստաբանն է նախաձեռնել և/կամ միակողմանի իրականացրել պայմանագրի լուծումը:

Այս համատեքստում, Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում ընդգծել, որ նախ չի եղել երկու կամ երեք դատական նիստ, որոնք կայացել են Փաստաբանի բացակայությամբ՝ այն պարզ պատճառաբանությամբ, որ ընդհանուր առմամբ եղել են վեց դատական նիստեր, որոնցից երկուսին Փաստաբանը մասնակցել է՝ ըստ Դիմողի, երկուսը չեն կայացել և վերջին նիստին կողմն արդեն իսկ ունեցել է նոր փաստաբան: Առկա չէ նաև որևէ ապացույց այն մասին, որ կողմերի պայմանագրի լուծման արդյունքում Դիմողը փաստացի որևէ բացասական հետևանք է կրել, կամ բացասական ազդեցություն է առաջացել Դիմողի գործի համար: Հետևաբար, Հանձնաժողովը հաստատված է համարում, որ Փաստաբանը չի թողել Դիմողի գործը այնպիսի ձևով և այնպիսի հանգամանքներում, որի արդյունքում վստահորդը հայտնվել է անելանելի դրության մեջ և ժամանակին չի ստացել այլ իրավական օգնություն:

Նման պայմաններում, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում փաստացի բացակայում են Կանոնագրքի 3.8.2-րդ և 3.8.3-րդ ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները՝ հաշվի առնելով, որ կարգապահական վարույթի շրջանակներում չի ներկայացվել որևիցե ապացույց առ այն, որ պայմանագիրը լուծվել է Փաստաբանի նախաձեռնությամբ առանց հիմնավոր պատճառի, իսկ պայմանագրի՝

փաստացի կողմերի փոխադարձ համաձայնությամբ լուծվելուց հետո, գործը մնացել է խոցելի կամ անելանելի վիճակում:

7.1. Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի խախտման մասով Հանձնաժողովը անհրաժեշտ է համարում արձանագրել.

Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի համաձայն՝ *պայմանագիրը լուծելիս փաստաբանը պարտավոր է՝ վստահորդին, կամ պատվիրատուին, կամ վստահորդի կամ պատվիրատուի կողմից լիազորված անձին վերադարձնել պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, եթե իրավական օգնություն ցույց տալու պայմանագրով այլ բան նախատեսված չէ, ինչպես նաև վստահորդին վերադարձնել հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը (փաստաբանը կարող է այդ փաստաթղթերի պատճենները պահպանել):*

Փաստաբանի և իր վստահորդի միջև հարաբերությունների որոշակիությունից և կանխատեսելիությունից ելնելով՝ Կանոնագրքով փաստաբանի համար սահմանվում է պայմանագիրը լուծվելու դեպքում որոշակի գործողությունների կատարմանը հետամուտ լինելու պարտականություն, մասնավորապես՝ պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել, վստահորդին կամ պատվիրատուին, ինչպես նաև հանձնարարության կատարման ընթացքում իրեն հանձնված կամ իր կողմից ձեռք բերված փաստաթղթերը վստահորդին վերադարձնելու մասով:

Այս կապակցությամբ Հանձնաժողովն արձանագրում է, որ Դիմողի և Փաստաբանի միջև կնքված պայմանագիրը փաստացի լուծվել է, ինչից հետո Փաստաբանն իր հերթին Դիմողին է վերադարձրել պայմանագրով սահմանված գումարը՝ այնքանով, որքանով Դիմողը փաստացի վճարել է իրեն:

Բացի այդ, չնայած կողմերի բացատրություններով անվիճելի է մնում այն փաստը, որ պայմանագրի գինը կազմում է 400.000 ՀՀ դրամ, այնուամենայնիվ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ Դիմողի կողմից հիմնավոր կասկածից վեր չափանիշով պայմանավորված չի ներկայացվել որևիցե ապացույց, որը առերևույթ կվկայեր պայմանագրով նախատեսված գումարը իր կողմից Փաստաբանին ամբողջ ծավալով վճարված լինելու մասին: Այլ կերպ ասած, Փաստաբանը չէր կարող վերադարձնել ավելի շատ գումար, քան այն, որը փաստացի վճարվել է նրան, իսկ գործի նյութերով հաստատվում է միայն 200.000 ՀՀ դրամ Փաստաբանին վճարված լինելու փաստը, որպիսի չափով էլ Փաստաբանը վերադարձրել է գումարը: Ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, որ նիստի ընթացքում Դիմողը երկու անգամ չի պատասխանում Փաստաբանի այն հարցին, թե արդյո՞ք կանխիկ գումար է վճարվել իրեն:

Նման պայմաններում, Հանձնաժողովը չի կարող ապացուցված համարել այն հանգամանքը, որ Դիմողը Փաստաբանին վճարել է պայմանագրի գինն ամբողջ ծավալով:

Ավելին, Հանձնաժողովն անհրաժեշտ է համարում ընդգծել այն փաստը, որ Փաստաբանը 01.12.2022թ.՝ բանկային փոխանցման միջոցով, Դիմողին վերադարձրել է 200.000 ՀՀ դրամը, ինչն իր հերթին՝ Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետի համատեքստում, արդեն իսկ վկայում է Փաստաբանին վերագրվող վարքագծում տվյալ ենթակետի պահանջների խախտման հատկանիշների բացակայության մասին, քանի որ Փաստաբանը ոչ միայն որոշակի գործողություններ է կատարել իրեն տրված հանձնարարության կապակցությամբ, այլ նաև վերադարձրել է հոնորարն այնքանով, որքանով այն վճարվել է իրեն: Միաժամանակ, Հանձնաժողովը արձանագրում է, որ Կանոնագրքի նշված ենթակետի կարգավորումը փաստացի վերաբերում է պայմանագրով ստացած հոնորարի **այն մասի վերադարձմանը, որի դիմաց աշխատանք չի կատարվել,** որպիսի պայմաններում Փաստաբանի կողմից Դիմողին նշանակալի որևէ չափի գումարի վերադարձված լինելն արդեն իսկ վկայում է Փաստաբանի վարքագծում նշված կանոնի խախտման բացակայության հանգամանքի մասին:

Ինչ վերաբերում է փաստաթղթերը վստահորդին վերադարձնելուն, ապա կարգապահական վարույթի ընթացքում Դիմողը փաստացի չի ներկայացրել որևիցե ապացույց առ այն, թե կոնկրետ ինչ փաստաթղթեր են մնացել Փաստաբանի մոտ: Ավելին, կարգապահական վարույթի ընթացքում Դիմողն ըստ էության նաև հաստատել է, որ Փաստաբանին բնօրինակ փաստաթուղթ չի տրամադրել, փոխարենը տրամադրել է միայն պատճեններ, ինչը հաստատվել է նաև Փաստաբանի կողմից ներկայացված դիրքորոշմամբ:

Նման պայմաններում, Հանձնաժողովը գտնում է, որ Փաստաբանի վարքագծում փաստացի բացակայում են նաև Կանոնագրքի 3.8.4-րդ ենթակետերի պահանջների խախտման հատկանիշները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Հանձնաժողովը գտնում է, որ սույն կարգապահական գործի քննությամբ չի ապացուցվել, որ փաստաբան Տաթևիկ Միրոյանն առանց որևէ պատճառաբանության հրաժարվել է կնքված պայմանագիրը կատարելուց և/կամ Դիմողի գործը թողել է անելանելի վիճակում, ինչպես նաև չեն ապացուցվել այն հանգամանքները, որ պայմանագիրը լուծելիս Փաստաբանը Դիմողին չի վերադարձրել փաստաթղթերը, ինչպես նաև հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարել, որպիսի պայմաններում Փաստաբանին վերագրվող վարքագծում ըստ էության բացակայում են Օրենքի և (կամ) Կանոնագրքի պահանջների խախտման հատկանիշները:

Վերոգրյալից ելնելով և ղեկավարվելով Օրենքի 11.1-րդ հոդվածի 3-րդ մասով, 39.7-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով և 7-րդ մասով, 39.9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, Հանձնաժողովը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Տաթևիկ Արտավազդի Միրոյանի (արտոնագիր՝ թիվ 2340) նկատմամբ Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 3.8.2, 3.8.3 և 3.8.4 ենթակետերի պահանջների խախտման հատկանիշներով հարուցված թիվ ԿԳ-23006 կարգապահական վարույթը կարճել:

2. Հանձնարարել Հանձնաժողովի նիստերի քարտուղարին՝ սույն որոշման մասին իրազեկել կողմերին:

<u>Ծանոթություն.</u> Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն ուժի մեջ է մտնում այն փաստաբանի կողմից ստանալու հաջորդ օրվանից:

ՀՀ փաստաբանների պալատի
կարգապահական հանձնաժողովի
նախագահ՝ **Տաթևիկ Շալջյան**

թիվ ԿԳ-23006-2-Ա
31 մայիսի 2023թ.
ք.Երևան